

դաքի մը չէ յաջորդած, այլ ըստ արաբ աշխարհագիրներուն Ը. դարուն հիմնուած է Ապտ էլ-Մէլէքի որդւոյն Սիւլէյմանէն: 3.— Ռամահ և Ռեմէհէ բառերը ստուգաբանօրէն յօսելով՝ բոլորովին տարբեր են. Ռեմէհէ կը նշանակէ աւազ, և Ռամահ բարձրութիւն: Այս առարկութիւնը ոմանք կը մերժեն:

Երուսաղէմի Աստուածաշնչակաւ Դարոյի ուսուցչապետ L. Heydet Արիմաթիան կը նոյնացնէ Rentis ին հետ, որ Լիւզի հիւսիսային արևելքը կը գտնուի. այս մասին գրած է իր մէկ անտիպ գործին մէջ, որուն համառօտութիւնը հետեւեալն է: Եւսեբիոս Արիմաթիան կը նոյնացնէ Ռամաթայի կամ Ռամաթայիմ—Սոֆիմի, Սամուէլի հայրենիքը, Լիւզի մօտ: Յերոնիմոս կ'աւելցնէ թէ՛ ան թոմնա գաւառին մէջ էր: Այս երկու հեղինակները մեզ կը վստահացնեն թէ Արիմաթիան իրենց ժամանակ կը կոչուէր Remphis (Եւսեբիոս) կամ Remphis (Յերոնիմոս): Ո՞ւր կ'առուցուած էր Ռեմիթիւս—Արիմաթիան: Այս Ռեմէն չի կրնար ըլլալ, այն պատճառներուն համար զոր մէջ բերաւ Բոպինսըն: L. Heydet կը յարէ թէ անկարելի է չճանչնալ այս անունը (Արիմաթիա) Rentis ի արդի տեղւոյն մէջ. ph քաղցրածայնութեան համար է. տւրեմն ճիշտ բառն է Remtis. Եւսեբիոսի բնագրին մէջ t գիրին ջնջուածը ընդօրինակողներուն գործը կրնայ ըլլալ, եթէ քաղցրածայնութեան համար չէ ջնջուած: M գիրին ո՞ր փոփոխութիւնը սովորական է արարներուն մօտ: Rentis գիւղ մ'է ուր կը զբտնուին բաղմաթիւ աւերակներ, ջրհորներ և հին գերեզմաններ: Մասնաւորապէս կը նշմարուին միւսնոյն գիւղին մէջ եկեղեցիի մը բեկորները և գիւղէն դուրս, քիչ հեռի, բնակիչները ցոյց կու տան մեծ և գեղեցիկ մողայիքի մը մնացորդները, և կ'ըսեն թէ՛ ուրիշ եկեղեցիի մը մնացորդներն են: Գիւղը բարձրութեան մը վրայ է և Միջերկրականէն 220 մէթր բարձր է, և կը նայի շրջակաները և ընդարձակ դաշտին վրայ: Rentis Լիւզի հիւսիսային—արևելքը երեք մղոն է: Ռամադայիմի յատուկ բոլոր նկարագիրները կը պատշաճին: Ս. Երկրի Խաչակիրներուն համար պաշտօնական յիշատակարան մը կը վկայէ թէ Rentis Արիմաթիան էր, Յովսէփի հայրենիքը. Assises de Jérusalem ի մէկ զըլուսին մէջ կը կարդացուի «Լիւզի Ս. Գէորգի քորեպիսկոպոսները որո՞նք են. — . . . Արիմաթայի Ս. Յովսէփի արբան, որ հիմակ Rentis կը կոչուի . . . »: Այս շրջանի ուրիշ յիշատակա-